

Գ Ր Ա Կ Ա Ն

ԵՌԱՆԱՆԵՍ ՊԱՊԻՆԻ

ՀԱՅ ԵՒ ԳԻՆԻ



ԱՂԱՅԱՆՔՆԵՐ ԱՌ ՏԵՐ

Պիտ ուզէի զգալ, Տէր, ինքզինքըս սըզէս
Հիւզակի մէջ մեծցած հովուի մը նըման.
Ու տիպարով ողորմութիւն խնդրողի
փնտռել վըճիտ ջուր 'ւաւելցուք Մաննայի:

Պիտ' ուզէի, Տէր, ըլլալ պարզ ինչպէս էշն
Որ հանդարտիկ ծաղիկն ու խոտը կ'ուտէ.
Եւ ուսերուս վրան բռն առնել զըթութեան
Որ կը շնչէ անհետ խայթիւրը խզի:

Պիտ' ուզէի, Տէր, թողուլ սէզ դժնութիւնն
Որ իմ հոգիս կ'ապականէ, ու դառնալ
Ըլլալ ինչպէս խոտին ծղիկը վըտիտ
Ջոր փու դաշտիդ մէջ կը կոխէ ամէն ոք:

Պիտ' ուզէի, Տէր, նաեւ ձօնն արցունքի —
Արցունք սիրոյ, արցունք արդար ամօթոյ —
Որ հուսկ յանկարծ պայթուցանէր փեռեկէր
Հոգին պղտոր որ կոյտանոց կը հոտի:

Պիտ' ուզէի, Տէր, որ այս իմ կերպարանքս,
Ամբարտաւան սըզեղութեամբ գողոզ միշտ,
Փայլեցնէր յաւէտ ժըպիտ մը վըճիտ
Քու գորովիդ՝ սրուն ես չեմ արժանի:

Պիտ' ուզէի, Տէր, որ ինչպէս ըրիր այն
Փախըստէին՝ որ խոզարած էր դարձած,
Շընորհէիր ինծի անթափ ըզգեստներ
Եւ ապաւէն մ'այայրենական տունին մէջ:

Պիտ' ուզէի, Տէր, որ Քու սէրըզ զըթած
Մեծ բոցերով այրէր սիրտս, այնպէս որ ան
Հալածելով ցաւը գտնէր փոխարէն
Անհերքելի իր հէտութիւնն ու հանդիս:

ՕՐ ԲԱՐԲՈՒԹԵԱՆ

Երբոր հնչեն շեփորաներն Յայտնութեան
Աւերակաց վրան եւ խորերն հորերուն
— Ինչպէս Հօգոդն բաւ — եւ այն որոտէն

Մահաստաններն համաբոլոր դուրս փսխեն
Ժողովուրդներն հիազարհուր՝ կրկնակի
Մարմին զգեցած ուրուններու տարմ առ տարմ,

Եւ իրարու հետ խառն ազգեր ու ցեղեր,
Ջարհուրելի զունդերն արագ պիտ' երթան
Ժամագրութիւնը դէպ ի մեծ՝ Յովսափաթ,

Ուր դառն՝ հըզօր հառաչներու ժխորին մէջ
Պիտի յետին իրենց բախտին վիճակուի,
Մեռելներու զինուորութիւնն անըսպառ,

Դուն եւս, ով մեռանելոցդ այս օրէն՝
Պիտի քշուիս դէպ ի հովիտը դժնէ
Գալիք Տիրոջ դէմքին առջեւ անաւոր:

Գերեզմանիդ պատը պիտի կործանի
Ու դուն փախչիս մըթին բանտէն որդերու
Մայթին վըրայ խարազանուած այծու պէս:

Քաղաքանկան հետտուսի այն բոբրիւնէն
Ըզգաս պիտի միսը վըրան ոսկերիւրդ
Փռտած տրորած քու փոսիդ մէջ հինօրեայ:

Եւ քորէից կայծակումն որոտուն
Որ կը փչէ մարդոց աղից պետութիւնն
Ամպերն ի վար տեսնես պիտ' էջօն Յիսուսի:

Ու դուն որ խրոխտ գողոզութեամբ կարկտուած
Ունջին հետ կը դընես ուխտ ու դաշինք,
Կամշոտ յամառ թագուստիդ մէջ ընդունայն,

Ի՞նչ պիտի 'սես ուրեմն, ցնորք դու տղմուս,
Քու որդեալից օրէնդ ելլես երբոր դուրս
Երեւոյթովը քասօքնելի դիակի:

Անոր որ քեզ ուզեց ընել ծընուցիչ
Գեր քան ամէն բնութիւն ըզքեզ օժտելով
Եւ իր յատուկ տանջանքով քեզ վըճարեց:

Ի՞նչ պիտի 'նես դուն այն վերջին հանգչսին
Ուր պիտ' երկինք դըժոխք իրար խառնելին,
Եւ պիտ' ամէն չըմեղանք մնայ ապարդիւն:

Դուն որ այնքան կը պանծաս այս խթման օրն,
Ոգնութիւն ուր պիտի գտնես, ուր պրծում
Թափանցումն աստուածային փայլակին:

Եթէ հանուր զարմն որ միշտ մեղք կը գործէ
Անդուլ առանց ամէնալու՝ հինգ կողմաց
Վըրայ զոր մեզ թողուք Հեղեղը ջրերու,


Գիտնար թէ վերջ պիտ' ունենայ Քրիստոսի
Համբերութիւնն երկրորդ անգամ փայլելուն,
թէ ան փառքով ու զօրութեամբ երբ դառնայ

Պիտի լըլլան այլ եւս առակ' անարգանք'
Ամբարտաւան գերեզմանին վըրայ մեր'
Աւետարանն ու Սաղմոսն իր խօսքերով.

Ոչ ալ աշխարհն աղօտացած ծաղրածէ
Յայտնելիք կրակին խոստումն անդըրուծ
Որ պիտ' ամէն շիրմէն հլլողը տոչէ,

Եւ հուսկ ուրեմն հօտը կռուող ու Հնացող
Յետ խնդալից լըլլացումէ մ'արցունքի
Պիտի դառնայ քաղաք մ'ըլլայ սուրբերու:

Թրգմ. Հ. Ա. ՂԱՅԻՆՅԱՆ



Ա Ր Ե Ն Ա Փ Ա Ն

Արևազաւ. լոյսը կ'իջնէ չիթ առ չիթ,
կաթնափրփորի երկընքէն.
Կ'այրի տաճարն, արքայութիւն հըրեղէն,
Ջահէրն՝ հազար մարգարիտ:

Ջանգը ժամին կը թըրթըռայ ցնծագին,
Արևազաւ սրբալոյս.

Բորբոքելով ծեր երէցին յետին յոյս,
Խուսող պատարանք ապրումին:

Եղեամբ պէս անոյշ երգերն հայրերուս
Աըրտիս վըրայ կը սառին.

Ու դողդոջուն կ'երթամ աղբիւրը ժամին՝
Ըմպել բաժակ հրաշող լոյս:

Լի է հոգիս սրբամաքուր հեշտանքով,
Աղքայութեան դուռն է բաց.

Կանթեղն ալ սուրբ Յիսուսիս քովն է կախուած
Հուր հրեշտակի անկարկով:

Լոյս կը լեցուի որմերէն ներս տաճարին
Ուր լիւաներ կը ննջեն.

Եւ ճնճղուկներ լուռ, թևամոկի կ'աղօթեն
Ներքե խաչին գմբէթին:

Նոր են զարթած դաշտի ծաղկունք արևու
Համբոյրներու կըրակէն.

Այս Բնշ հըրաշք, թարմ ծաղկներն ալ կ'երգեն
Առաւօտեան ալելու:

Թիթեռնիկների կը թափառին վարդէ վարդ,
Շաղով ծաղկունք կը ցօղտին.

Կեանքն է երազ շողերու մէջ խնդագին,
Արևազաւն է զուարթ:

Իմ հայերուս հաւարքով լոյսն է շաղունք
Անմահութեամբ պատարուն
Հոգիս կ'ըմպէ կողէն հոսող սուրբ Արիւնն
Ջառանցելով մահ ու սէր:

Խորանի մօտ կոյս հոգիներ նուրբ քօղով
Մոմի նըման կը հալին.
Ուր քընաթափ հրեշտակներու աչքերին
Լոյսը կու գայ հրճուանքով:

Ու հոն կու գան՝ ցայգախըրով ճամբայէն
Խոցուած սրտեր՝ արցունքի.
Ցամքած սափուրն անոնց սրտին կը լեցուի
Այս արփենի աղբիւրէն:

Մուշ մուշ մամիկս օրորունելով կ'աղօթէ
Երգով, խնկով ողողուած.
Մատղաշ բարտին սօսափիւնով եկիւղած
Հեզիկ երգին կ'ընկերէ:

Յոգնած կոպեր անճառգայթ և անյոյս,
Խուլ հառաչով կը զոչեն.

«Լոյս Արարիչ, շողիկ մը տուր քու Ակէն,
Արևազաւ, Լոյս, Լոյս, Լոյս »....

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ

